

որ յիշեցինք, հազար եօթը հարիւր եւ յիսուն մղոն է, կամ երկու հազար երկու հարիւր եւ երեսուն վերստ: Եւ Աստրախանէն Ս. Պետերպուրգ անոնք կը հաշուեն երկու հազար երկու հարիւր վերստ:

«Պէտք է նկատել, որ հայերը ենթակայ են շատ մը կամայական հարկադրութեանց, երբ անոնք կը ճամբորդեն Թուրքիոյ պետութեան մէջէն: Սակայն, անոնք կը վայելեն քաղաքէ քաղաք առեւտուր ընելու շնորհը, աւելի դործնական քան Ռուսիոյ մէջ: Անոնք Ռուսիոյ մէջ ալ անյարմարութեանց ենթակայ են, երբ Աստրախանի կառավարիչը կողոպտիչ մը ըլլայ, կամ երբ Գիլանի Ռուսական հիւպատոսը կեղեքիչ եւ լիբը ըլլայ, Կասպեան Ծովի վրայ Ռուսական նաւարկութիւնը վերջնոյս ձեռքը ըլլալով:

«Բաղմաթիւ Հայեր կան, որոնք կ'ընդունին Ռուսական հպատակութիւնը: Ատով անոնք իրաւունք ունին աւելի մեծ շնորհքի այդ երկրին մէջ: Բայց ինչ որ Ռուսաց նախընտրութիւնն է Պարսից նկատմամբ, երկուքին ալ հաւասար չահն է Թուրքիան զրկել այն առաւելութիւններէն, որոնք կը ծագին Պարսկական վաճառականութենէն, որ այնքան նկատելի եղած է որ կրնայ մեծ թուով ուժեր պահել ոտքի վրայ, եւ յաճախ նստարը իրեն ի նըպաստ դարձնել:

«Գիլանէն Աստրախան, հաշուելով առանձնացումներն եւ ուրիշ պատահական դիպումները, կարելի է հաշուել երեսուն օր, անկէ Յարիցին տասը, անկէ՝ Մոսկուա երեսուն եւ հինգ, անկէ Ս. Պետերբուրգ քսան: Ընդհանուրը՝ ինիսուն եւ հինգ օր, որ շատ օրեր աւելի երկար է քան թէ թրքական ճանապարհը, չափաւոր հաշիւով: Ասկէ աւելի, ըստ սովորական ընթացքին եղանակի, Աստրախանէն մեկնելու միակ յարմար ժամանակն է ամառուան կարաւանին համար մայիս, յունիս եւ յուլիս, իսկ ձմեռուան համար յունուար ամիսները:

«Ասիկա պէտք է յապաղումներ ստեղծէ, եւ յաճախ արդիւյէ ժամանակաւոր արտածումներ Ս. Պետերբուրգէն: Եւ չէ կարելի երեւակայել, որ մետաքսի բռնաւորումը Կասպից

Ծովի նաեւ ամառ ժամանակ Վոլգայի վրայ, եւ դարձեալ Պալթիկ Ծովի վրայ, պէտք կատարուի բաւական խոշոր ծախսով եւ անյարմարութեամբ: Մենք գտած ենք, որ սակերը կը հասնին հարիւրին երեսուն եւ չորսի, Լոնտոնի վաճառագրին վրայ, զրկուած է Ռէշտի ներկայացուցչութեան, եւ Լոնտոն զրկուած հում մետաքսի մաքսերն եւ բոլոր ծախքերը վճարուած, հարիւրին երեսուն եւ վեց, վաճառագրին վրայ:

«Նախապէս մեր կերպարը լաւ ծանօթ էր Պարսիկներուն, բայց վերջի տարիներս միայն քիչ մը Gloucester կերպաս ներածուած էր Հալէպի եւ Ջմիւռնիոյ մեր ներկայացուցչներուն շնորհիւ, եւ անկէ Պարսկաստան բերուած էր Հայոց միջոցաւ: Մեր կոշտ կերպասները նախապէս կը զրկուէին Արխանկել, ուրկէ Հայերը եւ Ռուսերը կը տանէին Աստրախան, եւ անկէ անոնց մեծագոյն մասը կը փոխադրուէր Պարսկաստան: Բայց այս վաճառականութիւնն ալ նմանապէս դադարած էր»(1)

Հանուէյ իր այս փաստացի հաշուետուութեամբ իսպառ ծիծաղելի կ'ընէ Elton-ի եռանդուն յաւակնութիւնները: Արդարեւ, երեւոյթապէս, դատելով Ռուսիոյ, Պարսկաստանի եւ Թուրքիոյ քաղաքական դիրքը իրարու հանդէպ այդ ժամանակ՝ օտարական մը պիտի շուտով տարուէր նման ծրագրով մը, զոր էլթոն յղացաւ, — ծրագիր մը, որ, սակայն, դժբախտաբար, Անգլիացոց համար եւ բարեբախտաբար Հայոց համար դործնական չէր:

Էլթոն այնքան եռանդով փարեցաւ զործին՝ համոզելով Պարսիկ, Ռուս եւ Անգլիացի պղծեցիկ անձնաւորութիւնները, որ նոյնիսկ մեր Հայ հում մետաքսի վաճառականներուն վախ պատճառեց: Ան ինքնիսկ կը յիշէ Հայոց Հայրապետին Պարսից դահածառանդին դիմելը ի նպաստ Հայ վաճառականներուն:

Այս Հայ Հայրապետը, կամ Կաթողիկոսը, ըստ իս, Ղազար Ա. Ջահկեցին (1737-1751) ըլլալու է: Հետաքրքրական է, որ Հայ կղերա-

1) British Trade... J. Hanway, Vol. I. էջ 33: